Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4145

301
У-37

1904

ՀՆՉ. ՑԵՂ. ՍՕՑ. ԴԵՄՕԿ. Կ.-ԹԻՒՆ

*Պրոլետարիներ բոլոր երկրների՝ միացէ՛ք:*

(Կ. ԿԱՈՒՑԿԻ)

# ՋԻԱՐՃՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐ
## եւ
# ՏՕՆԵՐ ԿՌՒԻ

*Հրատ. «ԸՆԿԵՐ» Մատենաշարի*

*No. 3*

*Թարգմ. Ահրիման*

*ՌՈՒՍՉՈՒՔ*

*Տպարան «Վերածնութիւն»-ի*

1904

41

301
Կ-37

2010

Printed in Turkey

5

ՀՆՉ. ՅԵՂ. ՍՕՑ. ԴԵՄՕԿ. Կ.-ԹԻՒՆ

*Պրոլետարներ բոլոր երկրների՝ միացէ՛ք:*

(Կ. ԿԱՈՒՑԿԻ)

301
Կ-37

# ՁԻԱՐՃՈՒԹԵԱՆ ՏՕՆԵՐ
*եւ*
# ՏՕՆԵՐ ԿՌՒԻ

*Հրատ. «ԸՆԿԵՐ» Մատենաշարի*

*No. 3*

*Թարգմ. Սերխեան*

*ՌՈՒՍՉՈՒՔ*

*Տպարան «Վերածնութիւն»-ի*

1904

Printed in Turkey

# ՁԻԱՐՃԱՒԹԵԱՆ ՏՕՆԵՐ
### եւ
# ՏՕՆԵՐ ԿՌՒԻ
### (Կարլ Կաուցկիից)

---

Ինչպէս յայտնի է՝ Մարքսի եւ Էնգելսի ժամանակից սկսած պատմութեան մեր հասկացողութիւնը տարբերութիւն է գտնում բնական եւ սոցիալական կրօնների մէջ, առաջին աստուածութիւն,- բնութեան կատարեալ ուժերը, երկրորդ՝ հասարակական ուժերը:

Նման տարբերութիւն կարելի է գտնել եւ տօների մէջ ու այստեղից կը ստացւեն հետաքրքրիր եզրակացու-

թիւններ։ Բնական տօները կապւած են բնութեան որոշ երեւոյթների հետ։ Այսպիսի տօներ առաջացան նախկին կոմմունիզմի ժամանակներում, այն ժամանակներում, երբ դասակարգային հակադրութիւնները կամ դեռ կատարելապէս աննշմարելի էին կամ զգացւում էին շատ աննշան չափով եւ մարդիկ քիչ էին դրանց վրայ ուշադրութիւն դարձնում։ Բայց այդ ժամանակներում մարդն անօգնական, երես առ երես կանգնած էր բնութեան առաջ եւ նրա քմահաճոյքներից էր կախւած, դրանցից նա դժւարութեամբ էր կարողանում պաշտպանել բայց հասկանալ նրանց անկարող էր։ Գիւղացիներն ու նաւաստիները մինչ օրս էլ մօտ են այդ աշխարհահայեցողութեանն, որը ստեղծում է թէ բնական կրօններ եւ թէ բնական տօներ, բնութեան տօներ։

Սօցիալական կրօնները, նոյնպէս



եւ սօցիալական ու քաղաքական տօներն առաջանում են քաղաքներում, ուր մարդիկ աւելի փոքր չափով են զգում իրենց կախումը բնութիւնից։ Այդ կրօններից աւելի նշանաւորը կարելի է համարել քրիստոնէութիւնը։ Հետաքրքիր է որ նրանց համար, որոնք դաւանում էին քրիստոնէութիւնը նրա գոյութեան առաջին դարերում, գիւղացի բնակչի եւ հեթանոսի հասկացողութիւնը — այլ կերպ՝ նախնական բնական կրօն դաւանող մարդու համար, — համանիշ էր։ Ինչպէս նրանց, նոյնպէս եւ միւսներին անւանում էին հեթանոսներ։

Սակայն բնութեան այդ տօնի մէկ մասն այնքան արմատացաւ մարդկութեան մէջ, որ սօցիալական կրօնները չը կարողացան նրանց ոչնչացնել. նրանք ստիպւած էին դրանց ճանաչել եւ բաւականանալ միայն նրանով,

որ նրանց բնական մօքի տեղ տւին նորը—միստիկական։

Ի՞նչ էին ներկայացնում իրենցից այդ տօները, որոնք այնպէս կապւած էին ժողովրդի հօգու հետ:

Նրանց կարելի է երկու խոշոր խըմբերի վերածել, մէկ կողմից արեգակի տօները, միւս կողմից աճող բերքի տօները: Պէտք է նկատել, որ մեր նախնիքները, վերջին տեսակի տօներին աւելի էին ուրախանում։ Բերքն ամբողջ տարւայ գոյութիւնն էր ապահովում. նրանից էր կախւած թէ ուրախութիւնն եւ թէ ազատ կեանքը։ Իսկ արեգակի տօները՝ ձմերային դարձի եւ մայիսեան տօների մէջ՝ ընկնում էին պաշարի պակասութեան ժամանակին, դա գրկանքների, կարիքի ժամանակն էր—գլխաւորապէս սառնամանիքների, ձեան, երկար գիշերների եւ մռայլ մէգերի:

Բայց հունձի տօները, նիւթական



բաւականութեան տօները, կամ անհետ կորել են մարդու համար, կամ մնացել որպէս բացառապէս գիւղական տօներ՝ քրիստոնէական կրօնի մէջ իրենց համար տեղ չը գանելով:

Ուրիշ բան են արեւի տօները, տօներ բեղմնաւորող, անընդհատ, յաղթական մարտի՝ խաւարի եւ քարացման ույժերի հետ՝ լոյսի եւ ջերմութեան համար։ Այդպիսի տօներն ամբողջովին գրաւում էին մարդուն, նըրան վերին աստիճան բարձրացնում էին, դրգռում նրա երեւակայութիւնը: Դրանք արմատախիլ անել մարդկանց սրտից անմտութիւն կը լինէր։ Նոր կրօնը պէտք է նրա հետ հաշտւէր, յամենայն դէպս լոյսի տօնից՝ խաւարն ու սառնութիւնը վերջի վերջոյ յաղթահարելով՝ հակառակ բոլոր թշնամիների, նա սարքեց տօներ ի պատիւ Փրկչի, որը յաղթահարեց դըժոխքի ույժերին։

Նոյն տարբերութիւնն որ մենք դըրինք երկու տեսակ տօների մէջ, կարելի է գտնել ժամանակակից հասարակութեան տօների մէջ էլ։ Բայց այստեղ նրանց տարբեր բնաւորութիւնը պայմանաւորւում է ոչ թէ բնութեան պայմանների զանազանութեամբ, այլ նոյն իրեն հասարակութեան միջի բաժանումով։

Բուրժուազիայի տօները կրում են հունձի հին տօների բնաւորութիւնը։ Նա դեռ հնձելու բան ունի եւ նոյն իսկ հնձելու այն, ինչ ինքը չէ ցանել։ Նրա տօները միայն նիւթական բնաւորութեան տօներ են եւ դրա համար մարդու վրայ խոր ազդեցութիւն չեն թողնում։ Նրանք իրենցից յետոյ միայն գլխի հիւանդութիւն են թողնում մէկ քանի մասնակցողների համար։

Պրօլետարիատի տօները նման են արեգակի կուի տօներին։ Ինչպէս եւ նրանք, սոքա սոցիալիզմի, այդ արե-



գակի կուի տօներն են, որ սփռում են լոյս ու ջերմութիւն. դրանք քարացման եւ խաւարի ուժերի հետ կռուի տօներն են. դրանք նոյնպէս զուգադէպ են գրկանքների, չարիքի ժամանակամիջոցի հետ եւ նոյնպէս գըրգռում են ու բարձրացնում մարդուն։ Ինչպէս եւ նրանք, սոքա ժողովրդի մէջ այնքան են արմատացել, որ տիրապետող դասակարգերի բոլոր ուժերը անկարող են նրա հետ գլուխ ելնել. կարելի է զուգահեռագիծ անցկացնել եւ աւելի՛ հեռուն։

Հունձի տօները, որպէս նիւթական բաւականութեան տօներ, կախուած են բնութեան պայմաններից, որոնք տարբեր վայրերում տարբեր են։ Այստեղից է նրանց տեղական բնաւորութիւնը, նրանք ամենուրեք երբէք չեն կարող տարածուել։ Նոյնը վերագրելի է եւ բուրժուազիայի տօներին։

Միւս կողմից արեգակի տօները

գլխաւորապէս ագու տօներ են. ուստի եւ նրանք կապւած են տեղական բը-նական պայմանների հետ: Բացի այդ, արեգակի երեւալը միաժամանակ ող-ջունում են միեւնոյն գօտիի բնակիչ-ները: Այստեղից է տօների միջազ-գային բնաւորութիւնը. կարիք չկայ ցոյց տալու որ դա վերաբերում է եւ պրօլետարիատի տօներին:

Ինչ վերաբերում է ժամանակին, ապա եթէ մենք կարող ենք հետեւել արեգակի տօների եւ պրօլետարիատի տօների զուգադիպութեանը, մենք ոչ մէկ դէպքում այդ չենք կարող անել բուրժուազիայի տօների եւ հունձի տօ-ների վերաբերմամբ:

Հունձի տօները նշանակւած են որոշ-եալ բոյսերի համար, իսկ բուրժուա-զիան հունձն անընդհատ վերցնում է. օրէցօր նա հնձում է այն, ինչ նրա համար ցանում եւ բուսցնում է պրօլետարիա-տը: Անդադար նրա բերանն են ընկ-



նում տապակած կաքաւներ. նա երբ ուզում է ու թախանում է:

Եւ պրօլետարիատի բոլոր մեծ տօ-ները ընկնում են եկող արեգակի կի-սամեակի մէջ: Եւ դա պատահաբար չէ: Ներկայումս որքա՛ն էլ որ հեռու է կանգնած մարդը բնութիւնից, սրա հետ նրա կապը վերջնականապէս կը-տրւած չէ: Եկող արեգակի կիսամեա-կը, այն է մարտից մինչեւ մայիսի ժամանակամիջոցը, մէկ ժամանակ է, երբ մարդկանց բոլոր ձգտումները երեւան են գալիս աւելի սուր կերպով ու ուժեղ. եւ մարդ աւելի քան երբեւ իցէ զգաստանում է, դառնում յեղա-փոխական:

Զարմանալի չէ, որ մեր աւելի աչքի ընկնող յեղափոխական դէպքերն ընկ-նում են փետրւարից մինչ յուլիսի շրջանի միջեւ: Նուրբ բնազդը ծածկա-բար ասաց, մայիսի 1-ի օրը նշանա-կել մեր ապագայ կեանքի օրը:

Ու դեռ մէկ զուգահեռագիծ էլ գուցէ կարելի է անցկացնել մեր պրոլետարական գլխաւոր տօների և արեգակի երկու գլխաւոր տօների միջև։ Այս երկու տօներն են Ծնունդ՝ արեգակի ձմերային դարձ և Զատիկ՝ վրայ հասնող գարնան յաղթանակը։

Այսպէս էլ մեզանում երկու գլխաւոր պրոլետարական տօն կայ, մէկ կողմից 48 թւականի մարտի յեղափոխութիւնն և Պարիզեան կոմմունան, տօներ պրոլետարիատի ջանքով ստեղծուած՝ ժողովրդային առաջին և երկրորդ գարնան.

Միւս կողմից մայիսեան տօնը Ծնունդի նման՝ մեր ստեղծած լոյսի ապագայ յաղթանակի տօնն է.

Մարտի տօնին մենք պրոլետարիատի յաղթական անցեալն ենք տօնում, մայիսի 1-ի օրը մենք ոյժ և աշխուժութիւն ենք չտեմարանում գալիք ամբողջ կուի համար, այն բոլորի



համար, որը կարող է ապագայում մեզ սպասել, ոյժ և աշխուժութիւն ենք չտեմարանում, որպէսզի յաղթելու դէպքում հոգեպէս չընկճւէինք, որպէսզի կարող լինէինք կրել աւելի վատ փորձանքներ, նրա փշրելը՝ մինչ կատարեալ ոչնչացումը՝ ամէն մեծ, յուզիչ բոպէների:

Բայց մենք ոյժ և աշխուժութիւն ենք չտեմարանում նա՛և տօնելու համար մեծ յաղթանակներ, որոնց վրայ պրոլետարիատը կարող է յոյս դնել այն հաւատքով, որով Ծնունդից յետոյ կարելի է սպասել Զատկին և երրորդութեան տօնին։

Ինչպէս որ արեգակը բարձրանում է վեր մինչ ամառային դարձն ու ամէն օր մեզ աւելի և աւելի շատ լոյս ու ջերմութիւն է ուղարկում այնպէս էլ անընդհատ աճում է պրոլետարիատի ոյժն ու գիտակցութիւնը։

Թող մեր թշնամիների կատաղու-

*թիւնն ու չարութիւնն աճին նոյն աստիճան, այնքան աւելի փառաւոր կլինի մեր վերջնական յաղթանակը։*

*Արդէն շատ բան է արել պրոլետարիատը, նրան աւելի շատ բան սպասում է ապագայում։ Եւ յանուն ապագայի մենք տօնում ենք* ՄԱՅԻՍԻ ՄԷԿԸ :

---

ՎԵՐՋ

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԸՆԿԵՐ» Մատենաշարի

I Մ. Գորկի. Կեանքի Դիմաց. Թարգմ. Անրիեան . . 3 կ.

II Մ. Գորկի. Գարնանային Մեղեդիներ. Թարգմ. Անրիեան . 3 կ.

III Կ. Կաուցկի. Զւարճութեան տօներ եւ տօները կուլի. Թարգմ. Անրիեան. . 3 կ.

### ԳԻՆՆ Է

Ռուսաստանում . . . . . . 3 կ.

Արտասահմանում . . . . . 10 սան...

Русе, печ. „Меркуръ."

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0037774